ԿԱՆԱՆՑ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ

ՈՒՐՈԳԻՆԵԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

WIGMORE
WOMEN'S & CHILDREN'S
hospital with a heart

ՈՒՐՈԳԻՆԵԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

«Ուիգմոր կանանց և երեխաների հիվանդանոց»-ի ուրոգինեկոլոգիական ծառայությունը մատուցում է բարձրորակ բուժօգնություն՝ ապացուցահեն բժշկության նորմատիվներով, միջազգային ստանդարտներին համապատասխան: Բաժանմունքը հագեցած է վերջին սերնդի սարքավորումներով և ուլտրաձայնային սարքով. վերջինիս միջոցով կարելի է ախտորոշել անմիզապահության ամենաբարդ տեսակները:

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Արգանդի պարանոցի ցիտոլոգիական հետազոտություն
- Արգանդի պարանոցի / խոռոչի բիոպսիա
- Ներարգանդային պարույրի տեղադրում
- Արգանդի պարանոցի LEEP, Էլեկտրոկոնիզացիա
- Կոլպոսկոպիա/վուլվոսկոպիա
- Տրանսվագինալ 3D սոնոգրաֆիա
- Սոնոհիստերոսկոպիա, սոնոհիստերոսալպինգոգրաֆիա (արգանդափողերի անցանելության ստուգում)
- Արգանդի հեռացում՝ լապարասկոպիկ, հեշտոցային և բաց եղանակներով
- Կոնսերվատիվ միոմէկտոմիա (միոմատոզ հանգույցների հեռացում՝ արգանդի պահպանումով)
- Ձվարանների կիստաների հեռացում՝ լապարասկոպիկ եղանակով
- Հիստերոսկոպիա՝ ախտորոշիչ, էնդոմետրիումի պոլիպների, միոմաների հեռացում, ներարգանդային կպումների անջատում, կեսարյան հատման սպիի պլաստիկա
- Անպտղության բուժում նորագույն մեթոդներով
- Լաբիոպլաստիկա՝ սեռական շուրթերի հեռացում, պլաստիկա
- Պեսսարիաների տեղադրում՝ արգանդի և հեշտոցի պատերի իջեցման շտկում ոչ վիրահատական եղանակով
- Ուրոդինամիկա
- Ուրոֆլոմետրիա
- Ցիստոուրետրոսկոպիա
- Սլինգային վիրահատություններ՝ TOT, TVT
- Ուրեթրալ դիվերտիկուլների հեռացում
- Միզապարկ–հեշտոցային խուղակների պլաստիկա
- Արգանդի հեշտոցային ֆիքսացիա՝ իջեցման կապակցությամբ
- Հեշտոցի պատերի պլաստիկա
- Ցիստոսկոպիա՝ ախտորոշիչ
- Միզապարկի բիոպսիա
- Միզապարկի ՏՈՒՌ բիպոլյար եղանակով
- Միզածորանների ստենտավորում

ՍԿՐԻՆԻՆԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

«Ուիգմոր կանանց և երեխաների հիվանդանոց»-ում կանայք կարող են կատարել իրենց տարեկան բուժզննումները՝ օգտվելով առկա սկրինինգային փաթեթներից՝ տարիքային խմբերին համապատասխան:

Փաթեթները ներառում են համապատասխան մասնագետների խորհրդատվություն, գինեկոլոգիական և մամոլոգիական հետազոտություններ:

Ուշադրության է արժանի քլամիդիա և գոնորեա վարակների հետազոտությունների ներառումը սկրինինգային փաթեթի մեջ: Սկրինինգն անցնում են 18-30տ. սեռական կյանքով ապրող կանայք: Տվյալ հետազոտության նպատակն է վաղ հայտնաբերել վարակը և նվազեցնել անպտղությունը կանանց շրջանում:

ՎԻՐԱՀԱՏԱՐԱՆ

Վիրահատական բաժանմունքում առկա են մինիմալ ինվազիվ վիրաբուժության համար անհրաժեշտ բոլոր սարքավորումները՝ լապարասկոպիա, հիստերոսկոպիա և ցիստոսկոպիա իրականացնելու համար: Բարեհամբույր և հոգատար անձնակազմը կաջակցի Ձեզ հետվիրահատական շրջանում՝ ապահովելով Ձեր արագ ապաքինումը:

WIGMORE
WOMEN'S & CHILDREN'S
hospital with a heart